ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2006. Т. LIX, № 3.

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԻՄՈՆՅԱՆ

(ծննդյան 60-ամյակի կապակցությամբ)

Լրացավ կառավարման և ավտոմատացման բնագավառի ճանաչված գիտնական տ.գ.դ., պրոֆ., Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Տեխնիկական համակարգերի ինֆորմացիոն ապահովում» ամբիոնի վարիչ, ՀՃԱ ակադեմիկոս ***Սարգիս Հովհաննեսի Սիմոնյանի*** ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակը:

Ս.Հ.Սիմոնյանը ծնվել է 1946թ. Իջևան քաղաքում: 1964 թվականին ոսկե մեդալով ավարտելով տեղի N 1 միջնակարգ դպրոցը (որն, ի դեպ, հիմնադրվել է իր պապերի կողմից՝ դեռևս 1858 թ.)՝ նույն թվականին ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Ավտոմատիկայի և հաշվողական տեխնիկայի» ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտել է 1969 թվականին՝ ստանալով ինժեներ-էլեկտրիկի որակավորում «Ավտոմատիկա և հեռուս-տամեխանիկա» մասնագիտությամբ:

1969-1974 թթ. աշխատել է ԽՍՀՄ Էներգետիկայի նախարարության Հայաստանի էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ ինժեներ, այնուհետև՝ կրտսեր գիտաշխատող:

1974-1977 թ.թ. Ս.Հ.Սիմոնյանը սովորել է Ուկրաինայի ԳԱ-ի Էլեկտրադինամիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո նույն թվականին պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը Ուկրաինայի ԳԱԱ ակադ. Գ.Ե.Պուխովի և պրոֆ. Գ.Ի. Գրեզդովի գիտական ղեկավարությամբ: Վերադառնալով Երևան՝ 1977-1978 թ.թ. Ս.Հ.Սիմոնյանը նախ աշխատել է որպես ԽՍՀՄ Գլխատոմէներգոյի «Էներգիա» ԳԱՄ «Ատոմային կայանների աշխատանքային ռեժիմների մոդելավորման սեկտորի» վարիչ, այնուհետև՝ ԽՍՀՄ Գազարդի Էկոնոմիկայի ԳՀԻ Երևանի բաժանմունքի «Ավտոմատացված կառավարման համակարգեր» լաբորատորիայի ավագ գիտաշխատող:

1978 թվից ԵրՊԻ-ի հրավերով Ս.Հ.Սիմոնյանն աշխատում է Տեխնիկական կիբեռ-նետիկայի ֆակուլտետի «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» ամբիոնում, այնուհետև նորաստեղծ «Ավտոմատացված կառավարման համակարգեր» ամբիոնում՝ որպես դոցենտ: Հետագայում «Ինֆորմատիկա և կառավարում», «Չափիչ տեխնիկա և ինֆորմացիոն համակարգեր» ամբիոնների դոցենտ էր, իսկ 1995 թվականից՝ պրոֆեսոր:

1998 թ. պրոֆ. Ս.Հ.Սիմոնյանը ստեղծում և մինչ օրս ղեկավարում է ՀՊՃՀ Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Տեխնիկական համակարգերի ինֆորմացիոն ապահովում» ամբիոնը:

Ս.Հ. Սիմոնյանը ճանաչված գիտնական է. դեռևս ԵրՊԻ-ում ուսանելիս՝ արդեն 3-րդ կուրսում նրա ակնհայտ գիտական հակումները նկատվեցին ՀԳԱԱ ակադ., «Ավտոմատիկա և հետուստամեխանիկա» ամբիոնի վարիչ և ԵրՊԻ-ի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Լ.Արեշյանի կողմից, որի հետ սերտ համագործակցությունը շարունակվեց մինչև երջանկահիշատակ ուսուցչի մահը (2003թ.):

Ս.Հ.Սիմոնյանի գիտական հետազոտությունները վերաբերում են կառավարման տեսությանը և պրակտիկային, օպտիմալացման համակարգերին, ժամանակի իրական և արագացված մասշտաբներում զանազան տեխնոլոգիական գործընթացների կառավարմանը, հաշվողական մաթեմատիկային, դիֆերենցիալ ձևափոխություններին, հիբրիդ հաշվողական տեխնիկային և այլ բնագավառների: Թվարկված գիտական հետաքրքրությունների այս լայն շրջանակներից, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել հետևյալ երեք հիմնական ոլորտները, որոնցում առավել ցայտուն են դրսևորվել նրա՝ որպես լուրջ գիտնականի որակները.

- գործնականորեն լուծել է օպտիմալ կառավարման տեսության մեջ հայտնի Ֆելդբաումի հիմնախնդիրը՝ ընդհանրացված դրվածքով (այդ արդյունքները լուսաբանվել են նրա «Դինամիկ օպտիմալացման խնդիրների հիբրիդ մոդելավորման որոշ հարցեր» թեմայով թեկնածուական ատենախոսությունում (1977թ.)),
- մշակել է ոչ գծային ծրագրավորման դինամիկական խնդիրների բավականաչափ լայն դասում ընդգրկվող զանազան մասնավոր խնդիրների լուծման նոր արդյունավետ մեթոդներ, ալգորիթմներ, մասնագիտացված կիրառական ծրագրերի փաթեթներ, ինչպես նաև մասնագիտացված հիբրիդ հաշվիչների սինթեզման հիմունքները (այդ արդյունքները տեղ են գտել նրա «Ոչ գծային ծրագրավորման դինամիկական խնդիրների մասնագիտացված հաշվիչների սինթեզման հիմունքները» դոկտորական ատենախոսությունում (1993թ.)),
- հիմնավորել և իրականացրել է Գ.Ե.Պուխովի կողմից առաջարկված, այսպես կոչված, դիֆերենցիալ ձևափոխությունների նորագույն սիմվոլիկ մաթեմատիկական ապարատը ոչ դինամիկական համակարգերի վրա տարածելու՝ սկզբունքորեն նոր մոտեցումը, ինչպես նաև նշանակալիորեն զարգացրել է այդ ձևափոխությունների տեսությունը դինամիկական համակարգերի բնագավառում (1986-2006թ.թ.): Դրանով իսկ փաստորեն ձևավորվել է հիմնարար հետազոտությունների ոլորտի նոր գիտական ուղղություն և ստեղծվել է նոր գիտական դպրոց:

Ս.Հ.Սիմոնյանի կողմից ստացված գիտական արդյունքների մի մասը Ուկրաինայի ԳԱԱ ակադ. Գ.Ե.Պուխովի, թղթ.-անդամ Վ.Վ.Վասիլևի, տ.գ.դ. Ա.Ֆ.Վերլանի ներկայացմամբ տպագրվել է “Электронное моделирование” միջազգային հանդեսում, ինչպես նաև թարգմանաբար՝ ԱՄՆ-ում լույս տեսնող “Engineering Simulation” պարբերականում:

Պրոֆ. Ս.Հ.Սիմոնյանը թվով 30 զեկուցումներով հանդես է եկել ինչպես միջազգային, այնպես էլ համամիութենական և հանրապետական զանազան գիտաժողովներում:

Ս.Հ.Սիմոնյանը նաև գիտության բնագավառի հմուտ կազմակերպիչ է. 1998թ. նա ՀՊՃՀ-ում հիմնադրել և խմբագրում է “Моделирование, оптимизация, управление” խորագիրը կրող գիտական աշխատանքների ժողովածուն: Վերջինս աչքի էր ընկնում մասնագիտական բարձր որակներով, որի պատճառով էլ այն 2003թ. ընդգրկվել է ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների տպագրման համար

ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում, իսկ 2004թ.-ից վերանվանվել է ՀՊՃՀ Լրաբերի “Моделирование, оптимизация, управление” սերիայի: Լրաբերը մեծ ներդրում ունի մոդելավորման, օպտիմալացման և կառավարման բնագավառների տարբեր մասնագետների կողմից ստացված ժամանակակից գիտական արդյունքների պրոպագանդման գործում:

Պրոֆ. Ս.Հ.Սիմոնյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 9 թեկնածուական և 20 մագիստրոսական ատենախոսություններ: Ներկայումս նա 2 դոկտորական ատենախոսությունների գիտական խորհրդատու է և 8 թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար: Նա շուրջ 140 գիտական աշխատությունների, այդ թվում՝ 3 մենագրության հեղինակ (համահեղինակ) է: Ղեկավարել է 7 պայմանագրային թեմաներ, որոնց արդյունքները ներդրվել են ԽՍՀՄ ռազմական արդյունաբերության տարբեր բնագավառներում: Չորս պետբյուջետային թեմաների շրջանակներում ստացվել են հիմնարար հետազոտությունների ոլորտներում ընդգրկվող կարևորագույն գիտական արդյունքներ, որոնք պարբերաբար հրատարակվել են “Электронное моделирование” հանդեսում, ՀՀ ԳԱԱ «Զեկույցներում», ներկա «Տեղեկագրում», Вестник ГИУА, серия “Моделирование, оптимизация, управление”-ում և այլուր:

Տպավորիչ է նաև Ս.Հ.Սիմոնյանի ուսումնամեթոդական աշխատանքների ցանկը. նա հեղինակ և համահեղինակ է 28 մեթոդական աշխատանքների, որոնց թվում՝ 1 դասագիրք, 9 ուսումնական ձեռնարկներ, 1 բառարան, 4 համառոտագրությունների տեքստեր և այլն:

Ս.Հ.Սիմոնյանը նաև ակտիվ հասարակական գործիչ է. նա ՀՀ ԿԳՆ տեխնիկական գիտությունների փորձագիտական հանձնաժողովի անդամ է, ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ Տեղեկագրի և ՀՀ ՃԱ Լրաբերի խմբագրական խորհուրդների անդամ, դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության 032 Մասնագիտական խորհրդի անդամ և գիտական քարտուղար, ՀՊՃՀ-ի գիտատեխնիկական խորհրդի նախագահի տեղակալ, ՀՀ Էներգետիկայի նախարարության «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ գիտական խորհրդի անդամ և այլն:

Իր անբասիր գիտամանկավարժական գործունեության համար ստացել է ՀՀ ԿԳՆ պատվոգիր, ՀՊՃՀ վաստակագիր, ՀՃԱ Պատվո նշան, ՀՊՃՀ Ոսկե հուշամեդալ, բազմաթիվ անգամ ճանաչվել է ՀՊՃՀ զանազան մրցույթների հաղթող (լավագույն մենագրության համար՝ 1-ին մրցանակ, լավագույն գիտական աշխատանքների համար՝ 1-ին և 2-րդ մրցանակներ, լավագույն ուսումնական ձեռնարկների համար՝ 1-ին և 2-րդ մրցանակներ և այլն):

Պրոֆ. Ս.Հ.Սիմոնյանն ապրում է իր գիտամանկավարժական գործունեության ծաղկուն շրջանը: Նա դեռևս բազում անելիքներ ունի թե՛ գիտության և թե՛ երիտասարդ բարձրորակ կադրերի պատրաստման ասպարեզներում:

*«**Տեղեկագրի»** խմբագրական կոլեգիան , շնորհավորելով իր գործընկերոջը ցանկանում է նրան քաջառողջություն, նորանոր առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող արդյունքների ստացում, դեպի որոնք անվարան ընթանում է նա՝ իր անմնացորդ նվիրումով և բեղմնավոր աշխատանքային գործունեությամբ:*